

ՔՐԴԱԿԱՆ ԲԱՆԱԻՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ



Ո հասարակ արևելեան ազգերը, ուր
րեմի և քրդերը օժտուած են
բանաստեղծական ձիրքով, որի
յարաճուն դրութեանը միշտ
նպաստում են այն բնութիւնը,
ուր նրանք ապրում են, և
կեանքի պայմանները, որոնք այս-
պէս կամ այնպէս կապուած
են նրանց կեանքի հետ: Սոյն եր-
կու խոշոր երեւոյթները մեծ ազդեցութիւն ունենալով մի
որեւէ ժողովրդի վրայ՝ կունենան նաև նրա բանահիւսութեան
վրայ. ուրեմն երկու խօսք ասենք քրդաց բանաւոր գրակա
նութեան աճման նպաստող պայմանների մասին:

Ո՛րքան բանաստեղծական և հրաշալի են այն վայրերը,
ուր քիւրդը հաստատում է իր վրանը: Աստեղագարդ եր-
կինք, ուր լուսինն սքողուած հարսի պէս շրջապատուած բիւր
ականախաղ աստղերով՝ սահում է երկնքի կապոյտ կամարով.
իսկ արշալոյսն անկարելի է նկարագրել. ամբողջ արևելք
կարծէք թէ բոցավառուում է հրեղէն լուսով. արեգակի ա-
ռաջին ճառագայթներն ողջունելով բարձրաբերձ լեռներին,
հսկայ, յաւիտենական մտածմունքների մէջ խորասուզուած
կարծր ժայռերին, որոնց վրայ բնութիւնը սփռել է իր մա-
մուռը նրանց մերկութիւնը ծածկելու համար՝ ոսկեզօծում
է նրանց գագաթները: Խոր, օձապտոյտ ձորեր, որոնց բե-

րաններից վեր են ամբառնում բարաժայուների շարքեր, իբրև մարդկային ձեռքով շինած պարիսպներու Խնկաբոյր բլուրներ, լայնարձակ դաշտեր օձապոռոտ գծով արեգակի պայծառ լուսի միջով առաքում են դէպի Բարձրեալը իրենց անուշահոտութեան բուրմունքը: Խիտ, ազգի ազգի ծառերով դարդարուած անտառներ, որոնց մէջ բարձրուղէշ, բնականապէս շարուած ծառերը՝ կարծէք թէ պար բռնող խմբակներ լինին: Գեղեցիկ, երկներանգ մարգագետիններով պատած լճեր՝ հայելանում են արեգակի ճառագայթների առաջ: Վճիտ, ականակիտ, պայծառ, կաթնահամ աղբւրներն ու առուներըն, որոնք ոռոգում են մարգագետիններ և անտառներ: Իսկ վերջալոյսն իր պէս պէս տեսարաններով նոյնքան թովիչ և դիւթիչ է: Միթէ, այս տեսակ պատկերներ և տեսարաններ չեն ազգի մարդու հոգու և սրտի վերայ: Թէ բնութեան գեղեցկութիւնը որքան շատ է ազդում բոլորի վերայ, սա երևում է նաև այն հանգամանքից, որ յաճախ բրդերէն խաղերի մէջ տեղ է տրուում բնութեան գեղեցկութեան նկարագիրներին:

Քրդերն ունին կեանքի նոյն պայմաններն, ինչ որ ունին բաղաբաղրութեան ամենաստոր աստիճանի վրայ գտնուող աղբերը պատերազմների, բաջուլթիւնների, աւարառութիւնների, բռնութիւնների զգացմունքը յարաճում, զարգանում է ընտանեկան դատարարակութեան ազդեցութեան ներքոյ, և ինքը բիւրդն անընդունակ լինելով իր սեփական աշխատանքով, իր ճակտի քրտինքով ապրել՝ կեանքի կարիքը լրացնելու համար դիմում է գողութեան, աւարառութեան, և հէնց այս պատճառով բրդերի բանաւոր գրականութեան մէջ մեծ տեղ են բռնում պատերազմական երգերն, որոնց մէջ մտնում են նաև դիւցազնական խաղերը:

Պատերազմական խաղերի մէջ փառաբանում է բաջը, յաղթութեան պսակ տանողը, իսկ ծաղր ու ծանակի աւարկայ է դառնում վեհերոտը, երկչոտը: Պատերազմական երգերի մէջ դուրս բերուած հերոսները դառնում են բիւրդերի ամասարդների իյեալներ, մանուկների դաստիարակիչներ. պատերազմական-դիւցազնական վէպերից նշանաւոր են — Բոպլըլին, Համէ-Մուսէն, Բոգ-Բէկ, որոնց մէջ արտափայլում են նրա բաջութիւնն, աշխարհահայեցողութիւնը և մի

խօսքով այն ամենն, ինչ որ վերաբերում է նրա հոգու, մտքին և սրտին. իսկ) հերոսական երգերեց յայանի է «Համ-զօի» երգն, որ առաջ ենք բերում այստեղ իբրև նմուշ, և ասուած է Համզօի ընկերոջ կամ նրա քրոջ որդու օսմա-նեան զօրքերից բռնուելու և նրանցից ազատուելու ժամա-նակ: Այս երկու հոգիների (թողնեքը ¹⁾) ձեռք ձեռքի տուած 20—30 (սուլամների ²⁾) աջակցութեամբ պարապում էին ա-ւարառութեամբ, մարդասպանութեամբ և գողութեամբ. տէրութիւնը տեսնելով դրանց արարքներն ամեն ջանք գործ է դնում դրանց ձերբակալելու համար՝ բայց չէ յաջողում: Մի անգամ տէրութեան մի քանի պաշտօնեաներ զօրքերի հետ Համզօի բացակայութեան ժամանակ յարձակում են գործում Ալի (սուլարզայի ³⁾) տան վրայ և յաջողեցնում բռ-նել, շղթայել և իրանց հետ տանել: Հմզօն գալով տուն՝ իմանում է Ալի-սուլարզայի ձերբակալութիւնն՝ իսկոյն հե-տապնդում է և Փալան Թոքանի առաջ հասնում է զօրքե-րին և սկսում է մի կատաղի կռիւ, որի ժամանակ երգ-ւում է հետեւեալը.

- « Դառն աշուն է, մառախուղ է պատել
- « Դաշտեր ու ձորեր, մարգագետիններ,
- « Դէ՛հ, քաջ ձիաւորներ, ժամը հասել է,
- « Քաջաբար կռուենք, քաջութիւն գործենք:

-
- « Իմ քրոջ որդին խուլ ձայնով ասաց.
 - « Ո՛հ, հարիւրապետներ, հազարապետներ,
 - « Ես աղերսում եմ սրտի խորքերից,
 - « Որ իմ ձեռքերս աղատէք կապանքից,
 - « Եւ իմ ոտքերս՝ ծանր շղթայից,
 - « Հակառակ դէպքում, ահա գալիս է,
 - « Իմ կտրիճ բեռին, փահլէան Հմզօն:

-
- « Դեւաքոյինը—բեռ որդի, Ալի,
 - « Դոգալ ⁴⁾ և չ(թալ ⁵⁾ է, բոլոր ու մոլոր,
 - « Չախ կողմը նայիմ՝ հետեակ զօրքեր,
 - « Աջ կողմը նայիմ՝ հեծելազօրքեր,

¹⁾ Աղա, ²⁾ ծառայ, ³⁾ բեռորդի, ⁴⁾ գողաւոր, ⁵⁾ ձեղքուած:

« Հարիւրապետներ, հաղարապետներ,
 « Իժի ծնունդներ, օձի զաւակներ,
 « Մինչև քեռ որդիս չառնեմ Ռօմ ⁶⁾ ասկրից ⁷⁾
 « Ձեմ վերադառնայ տուն իմ հայրենի,
 « Եւ հարամ լինի հարազատի մօտ,
 « Ննջել, վայելել և սէր հեշտալի:
 « Դէ՛հ, քաջ ձիաւորներ, թողներ, ողիւրներ ⁸⁾
 « Ժամը հասել է, արդ ժամանակ է
 « Քաջաբար կռուենք, քաջութիւն գործենք:

« Քեռ որդի Ըլի, այդ ինչ մըլհամ է
 « Որ ձեռքիդ վրայ պինդ կապկապուած է
 « Ձեռքդ վըր բըրնին ⁹⁾ ուժգին դրուած է,
 « Երեք օր է, որ ես թափառում եմ,
 « Բասննու դուրներ ¹⁰⁾, ձորեր ու սարեր,
 « Դեաքդինու բարձրաւանդակներ,
 « Դառնապէս կրեցի ցաւեր ու դարդեր.
 « Դէ՛հ, քաջ ձիաւորներ, թողներ, ողիւրներ,
 « Քաջաբար կռուենք, քաջութիւն գործենք:

« Քեռ որդի Ըլի, ես թափառեցի,
 « Բասննու ձորեր, կեռ ու մեռ դաշտեր,
 « Իմ ծառաներիս խրախուսեցի,
 « Որոնք ասում էին «Հըմզօ, Հըմզօ,
 « Ո՛ւր ես տանում մեզ առանց բալլադի ¹¹⁾
 « Իսկ ես ասացի, Հըմզօն եմ, Հըմզօն,
 « Սիրուն, Հուճըէի իրիկ ¹²⁾ Հըմզօն եմ
 « Կարիճ Թըմոի—հայր Հըմզօն եմ ես
 « Քըհէլ ¹³⁾ թե՛ծիրի ձիաւորն եմ ես
 « Դէ՛հ, քաջ ձիաւորներ, թողներ, ողիւրներ,
 « Ժամը հասել է, արդ ժամանակ է,
 « Քաջաբար կռուենք, քաջութիւն գործենք:

Այս խօսքերից ծառաները քաջալերուելով բուռն յար-
 ձակում են գործում տաճիկ զօրքերի վրայ և ամբողջ մի-

⁶⁾ տաճիկ, ⁷⁾ զօրք, ⁸⁾ աղնուատոհմ, ⁹⁾ բրին—վէրք, ¹⁰⁾ հար-
 թափայր, ¹¹⁾ առաջնորդ, ¹²⁾ ամուսին, ¹³⁾ նժոյգ:

օր կռուելով՝ Ալի-խուարզային խլում են զօրքերից, բայց ծանր վիրաւորուած, այնպէս որ տակաւին տուն չհասած՝ մեռնում է:

Կայ և քրդական երգերի, խաղերի մի այլ տեսակ, որ կարող ենք անուանել հովուերգական խաղեր, որի մէջ մշտնում են սիրային և արկածային տարրերը:

Սիրային երգերը ստեղծւում են նախ այն պարագային, երբ մի թուռնի աղջիկ սիրահարւում է մի երիտասարդ ծառայի վրայ, և վերջինս պահպանելով Յովսէփի հաւատարմութիւնը՝ մերժում է իւր աղայի աղջկան առաջարկը, աղջիկը դաւադրութեամբ սպանել է տալիս իւր առաջարկութիւնը մերժող երիտասարդին, բայց վերջը զղջալով սկսում է երգեր, խաղեր ստեղծել. երկրորդ՝ այն ժամանակ, երբ մի երիտասարդ ծառայ սիրահարւում է իր աղայի աղջկայ վրայ, բայց վերջինիս հայրն այս բանը իմանալով՝ իրան վիրաւորանք է համարում և սպանել տալիս երիտասարդին: Առաջ բերենք մի քանի կտորներ սիրուց զրկուած քիւրդ երիտասարդների և օրիորդների հայեացքը սիրոյ մասին իմանալու համար:

«Սիրտս այրւում է ինչպէս մի բորբոքուած դէզ չոր խոտի, որ հարաւի ուժգին քամուց բորբոքւում է, և եթէ ամբողջ Մուրաթ գետ վրան թողուս երբէք չի հանգչի»:

«Սիրտս գարնան գետի պէս ելուկ ¹⁴⁾ է, որ ափերին խփում է իր ուժգին ալիքները:

«Դարդերով ծերացայ, որպէս եօթանասուն, ութսուն տարեկան ծերունի»:

«Ինչպէս որ աշնանային ցուրտ քամուց սեխը թառամում է, այնպէս էլ ես եմ թառամում՝ զրկուելով սիրուց»:

«Ա՛խ, Աստուած, երբէք պսակի չարժանացնես երկու միմեանց չսիրողներին»:

Սոյն տեսակ կտորների առատութիւնը քրդաց բանաւոր գրականութեան մէջ ցոյց է տալիս, որ քրդաց ամուսնական մթնոլորդն ևս լի է տխուր երեւոյթներով:

Արկածային երգերի հերոսները կրում են զանազան դժբախտութիւններ, զոհ են դառնում պատահական, անըսպասելի դէպքերին, և այդ մենք կտեսնենք «Մամէի» հետևեալ խաղի մէջ:

¹⁴⁾ Երբդացած:

« Վիճակը ձգող պաշտօնեան եկաւ,
 « Մէկ ու ճար Մամէին ասկարը տարաւ,
 « Տարած Մամէին հեռու երկրներ,
 « Անցան շարաթներ, ամիս, տարիներ,
 « Մամէն յետ չեկաւ, ծնողը կարօացաւ,
 « Սիրուն Աշէից լուր մի չստացաւ
 « Աշէն թուղթ ճանբեց, թէ Մամէ արի,
 « Որ բու սիրելին իր կարօտն առնի,
 « Մամէն հրաման առաւ իր ազից,
 « Քահէէ, բող նժոյգ քալեց ախոռից,
 « Չիու փօր-քաշիկ ու թամբը ժրեց,
 « Ուր զանգուն դրած՝ ձեռք խարբուղ ¹⁵⁾ թալեց,
 « Կանչեց իր Աստուած, ճանբայ ընկաւ,
 « Դէպ իր ծնողաց տուն շտապով եկաւ,
 « Եկաւ, կանգնեցաւ իր քօշիկ առաջ,
 « Աշէն իր գլուխ դռնից դուրս հանեց,
 « Իսկոյն ծառայից այսպէս պատուիրեց,
 « Որ հիւրի բահէլ ախոռը տանեն,
 « Իսկ հիւրն առանձին օգտն հրակիրեն,
 « Թող ուտէ ընթրիք ու հանգստանայ,
 « Յաջողութեամբ իւր ճանապարհ երթայ,
 « Աշէ, Մամէն եմ, ես բու մամէն եմ,
 « Այս էլ եօթը տարի, որ ես խորբաթ ¹⁶⁾ եմ
 « Ընթրիք ու հացին ես կարօտով չեմ,
 « Հրատապ սիրոյն ես կարօտով եմ:

« Նժոյգը քաշեցին գէպի ախոռը,
 « Մամէն շտապով գնաց տան կողմը,
 « Մամէն հարցրեց իր կին Աշէից,
 « Իմ գորովագութ ծեր մայրս ո՞ւր է:
 « Սիրելի Մամէ, արդէն գիշեր է,
 « Պառաւ մայրիկդ այժմ՝ քնուկ է,
 « Թող մնայ իրեն քաղցր քնոյ մէջ
 « Վեր կենայ այգուն, ուրախանայ անկերջ:
 « Մինչ լուսաբացին Մամէն ու Աշէն

¹⁵⁾ Սանձ, ¹⁶⁾ պանդուխտ:

« Սիրոյ կարօտը կը յագեցնէին,
« Ընկան բաղցր բուն, սիրուն ննջեցին:

« Մամէի մայրն առաւօտուայ դէմ,
« Ելաւ փնտռելու շունիթ ու կոնքը,
« Գնաց Աշէի սենեակը մտաւ,
« Եւ Աշէի ծոցում մի ջահէլ տեսաւ.
« Ձեռք ձգեց առաջ, նիզակը բռնեց,
« Անիծեալ լինի կանանց ուժ ասեց,
« Որ տէգ վերցնելու այնքան ոյժ չունի,
« Ապա վերցրեց ատրճանակը,
« Բայց ասեց, վայ, թէ ձայն ցրուի աշխարհ,
« Յետոյ վեր առաւ երկսայրի դաշոյն,
« Ծայրը դնելով կրծքին իւր որդու,
« Կատաղի ուժով դաշոյնը խրեց,
« Մէկ ու ճար որդու սիրտ ու թոք ծակեց.
« Մինչ Աշէն խորուկ կը խռուար,
« Խղճալի Մամէն ծանր կը տքար,
« — Մայրիկ, այդ Մամէն է, բո որդի Մամէն:

« Որդեակ իմ Մամէ, Մամէ որդեակ իմ,
« Հեռաւոր պանդուխտ, որդեակ իմ Մամէ,

« Ո՛հ, գայլ սարերի,

« Դու մայր Մամէի:

Քրդերէն երգերի մէջ առդերի վերջին յանգերը համարեա սկզբից մինչև վերջը «է»-ով են վերջանում, նաև պատահում է, որ մի տող երկարելով, խանգարում է ոտանաւորի ոտքն ու չափը: Առ հասարակ այս երևոյթը միշտ տեղի է ունենում քրդական երգերի մէջ, որովհետև նրանք, առ հասարակ ուշադրութիւն են դարձնում երգի իմաստի, եղանակի և բաղցր լինելու վրայ:

Ա. «է»-ի օրինակ.

«Ազէ Հըմզումը, Հըհզում'է,

«Կըրէ ճաւէ Հուճըէ մ'է,

«Առաքէ Թեճըէ մ'է

«Բաւէ Թըմոմ է: (վերը թարգմանուած է)

Բ. Ցողի երկարելու օրինակ.

«Հըրդի Դըգըմ, զարա նաբէ,

«Դըլէ մըն շուիթի նուա լոաըգի ճըլոյ աւըր վէտի,
բայէ խուրլէ ուաբէ.

Մուրաաէ աւէ վերաւ սըր վի գըրետի հուըք նարէ.
(վերը թարգմանուած է):

Քրդերէն երգերի մէջ նմանապէս պատահում է, որ մի
տողի մէջ միեւնոյն բառը կարող է հինգ, տասն, տասն և
հինգ անգամ կրկնուել. օրինակ.

«Ըղէ կալ բամ, սէ շար կալ բում,

«նիղիկէ հըվթէ, հըշթէ սալ բում,

«Միրո, Միրո, Միրո, Միրո, Միրո, Միրո....

Քիչ վերև ասացինք, որ քրդերէն երգերի մէջ տաղա-
չափութիւն գոյութիւն չունի, մի տող երկարելով՝ խանգա-
րում է ոտանաւորի չափը. սակայն ոտանաւորի չափը պահ-
պանելու համար մի որևէ ձայնաւոր կրկնում է հինգ,
տասը, քսան և այլն անգամ. օրինակ՝

«Ըզ նախոշըմ փըուքէհալըմ

ի. ի. ի. ի. ի. ի. ի. »:

Իսկ քրդերէնի մէջ կան երգեր, որոնք ենթարկուում
են տաղաչափութեան օրէնքին, այսինքն՝ նրանց ոտքերը հա-
ւասար են և միեւնոյն ժամանակ չեն շեղուում «եամբ»-ի ¹⁷⁾
օրէնքից. օրինակ.

«Դիւ բու | պըճուկ |

«Դըլէ | մըն բար

Դիւ բու | մըղէն |

Մամ ը'զ | հըսրա'թ |

Բեպի' | ըղէ' | ըշտէ'

Հիւ'ի | դըգըմ |

Հասըլ | նագ'ի |

Մուրաա | է է բէ դըլ | :

Քրդաց երգերի եղանակները լինում են երկու տե-
սակ՝ ծանր ու թեթեւ: Սիրային և արկածային երգերն ի-
րենց ներքին ախուր և սրտաճմլիկ բովանդակութեան հա-

¹⁷⁾ Մեծամերջ.

մաձայն շատ ծանր ու ազդու եղանակներ ունին, այնպէս որ, քաղցր երգողը կարող է մարդու աչքերից արտասուք հոսեցնել տալ. Պատերազմական երգերի եղանակներն երգւում են խրոխտ ելեէջների և տակտի համաձայն ձեռքի շարժումներ անելով: Եղանակը ինքն երգ յօրինողն է ստեղծում, յետոյ անցնելով բերանէ բերան, զանազան փոփոխութեան է ենթարկւում, այնպէս որ իւրաքանչիւր ոք չէ հետևում ստեղծողի եղանակին, այլ իւր քմահաճոյքի. ճաշակի համաձայն է երգում:

Քիւրդ հէքեաթների լռեան է սէր և յաղթութիւն, որոնց հասնելու համար՝ նա պէտք է կռիւներ և պատերազմներ մղէ դէերի հետ: Հէքեաթի մէջ գործող անձնաւորութիւնները լինում են երեք հոգի՝ այր մարդ, կին կամ աղջիկ և դէ. դէը և մարդը միշտ կռիւներ են մը. ղում միմեանց դէմ կ'ող պատճառով. վերջինս ոչ ոքի կողմ չէ հակուում, այլ պահպանում է չեղոք դիրք: Հէքեաթների մէջ դէերը ներկայանում են իբրև անձուռնի, այլանդակ հրէշներ, այլանդակ ականջներով, որը ընդունակ է օրը մի քանի գոմէշ, եղ, մարդ ուտելու: Ամբողջ ներկայացումները վերին աստիճանի առասպելական են, մարդու և դէի մէջ եղած կռիւները մի միայն կարող են առասպելական աշխարհում գոյութիւն ունենալ: Այն վայրերն, ուր կատարւում են գործողութիւնները՝ մի քանի աշխարհ են՝ օրինակ վերին աշխարհ, ներքին աշխարհ, լոյս աշխարհ, մութ աշխարհ. դէերն ապրում են գետնի տակ: Բացի դրանցից քրդաց հէքեաթների մէջ մեծ տեղ են բռնում նաև ջալաու և խորհրդատու պառաւներ, որոնք հէքեաթների մէջ եղած հերոսներին՝ այ՛ կամ այն խորհուրդն են տալիս իր ձեռնարկութեան մէջ¹⁸⁾:

Առականների մէջ արտափայլում է ժողովրդի աշխարհահայեցողութիւնը, իմացողութիւնը, փիլիսոփայութիւնը. դրանք ժողովրդի դարաւոր փորձառութեան արդիւնքներ, եզրակացութիւններ են. ժողովրդի իմաստութիւնը, մտաւոր

¹⁸⁾ Բնական հէքեաթներից մի քանիսը թաղամանուած ունինք, բայց իրենց երկար ու ձիգ բովանդակութեան պատճառով, չնայած նրանց հետաքրքրութեան չենք կարող առաջ բերել:

ու հոգեւոր կարողութիւնը բանահիւսութեան ոչ մի ձեւով
մէջ այնքան խոր կերպով արտայայտուած չեն, ինչպէս ա-
ռակներում. դրանք ցոյց են տալիս, թէ մի որեւէ ժողո-
վուրդ ի՞նչպէս է հասկանում իրան շրջապատող կեանքն, ինչ
հասկացողութիւն, գաղափար ունի այն վայրի մասին, ու-
նա ապրել է և ապրում է: Ահաւասիկ նոցանից մի բանիսը,
բիւրդ ժողովրդի աշխարհահայեցողութեան մասին գաղա-
փար կազմելու համար:

Աշխարհ որ կայ հիւրանոց է. շատերն եկած ու
գնացած են, իսկ մնացողներն էլ հիւրեր են:

Ինչք որ կայ, ոսկի թագ է, բայց ոչ բոլորի գլխին:
Ով կնոջ խօսքով ելնում ու նստում է՝ նա մեռած է
համարւում:

Երեխային և կնոջ երբէք խոստումներ չպէտք է անել:
Եթէ տարով գալու լինիս՝ սուլթան ես, ամսով գալու
լինիս՝ յարգելի հիւր ես, իսկ եթէ օրով՝ անդուր հիւր ես:

Այն որ ձեռքն է անում, չեն կարող անել ոչ հայրն
ոչ մայրը:

Ուրացութիւնը մարդու համար բերդ է:
Զգիտեմ ասելով՝ հանգիստ եմ:
Արջն ու պա՛ր, հովիւ դիւա՛ն:
Թէ տեսան՝ ես եմ, եթէ չտեսան՝ գող եմ:
Ես չեմ, բայց իմ հղբայր Կոկոն կտրիճ է:
Գիշեր ու ցորեկ գիտեմ, բայց քաղքի ճամբան չգիտեմ:
Մօրդ, որ նեղ կնկնայ, իրեն թող ապաւինէ կամ մի
անառիկ լեռան, կամ մի կտրիճ մարդու:

Համ ժամոց ելաւ, համ ջամուց:
Գեղեցիկ կինը մարդուն խելքից է հանում:
Կինն ամենամարդոյական էակն է:
Ես ո՛ւր, այդ տեսակ գործեր ուր:

Փափուկ հաց,
Կակուղ փոր,
Անկուշա հայ
Կեր հա կեր:

Զի դեռ չգնած՝ ուզում է մուր կապել:
Ցուն շինեցի՝ մաց կտո՛ւր:

Ա. ՄԿՐԾԶԵԱՆ